ԵՐԵՎԱՆԻ
ԿԵՆԴԱՆԱԲԱՆԱԿԱՆ
ԱՅԳԻ

ԵԿ-061-2023
20.07.2023թ.

«ԴԱՆՆԻԿ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ Մ. ՕՐՄԱՆՋՅԱՆԻՆ
/ՀՀ, ք. Երևան Արին Բերդի 40, հեռ.՝ +37494471539/

Հարգելի՛ պարոն Օրմանջյան,

«Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի /այսուհետ նաև՝ Այգի/ կարիքների համար 2022 թվականի նոյեմբերի 21-ին հայտարարված սննդամթերքի և կերերի ձեռքբերման ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-23/1 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) շրջանակներում 1-ին չափաբաժնի մասով, որպես ընտրված (հաղթող) մասնակից է ճանաչվել «ԴԱՆՆԻԿ» ՍՊԸ-ն (ՀՎՀՀ՝ 00478817, գործունեության հասցե՝ ՀՀ, ք. Երևան Արին Բերդի 40, հեռ.՝ +37494471539, էլեկտրոնային հասցե՝ nikodan18@mail.ru, info@eltender.am), որի հետ 09.01.2023թ-ին կնքվել է ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-23/1-2 ծածկագրով ապրանքի մատակարարման պետական գնման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր), որի շրջանակներում, հետագայում՝ ֆինանսական միջոցների հատկացմամբ պայմանավորված՝ 02.02.2023թ-ին կնքվել է նաև ֆինանսական միջոցների հատկացման և վճարման ու գնման ժամանակացույցների հաստատման համաձայնագիր:

Այգու կողմից, նշյալ համաձայնագիրը հաստատելուց հետո, սահմանված կարգով՝ ծանուցմամբ՝ «ԴԱՆՆԻԿ» ՍՊԸ-ին են ներկայացվել մատակարարման պատվերներ-հայտեր՝ սահմանված և հաստատված ձևաչափով, որոնց շրջնակներում «ԴԱՆՆԻԿ» ՍՊԸ-ն մատակակարարումները ի սկզբանե կատարել է խախտումներով, միաժամանակ՝ 07/07/2023թ-ին հայտ էր ներկայացվել «ԴԱՆՆԻԿ» ՍՊԸ-ին՝ պայմանագրային պարտավորությունների կատարման շրջանակում մատակարարել միս՝ խոշոր եղջերավոր կենդանու, սակայն՝ 13/07/2023թ-ին «ԴԱՆՆԻԿ» ՍՊԸ աշխատակից ներկայացած անձը, մատակարարել է հայտագրված 1100կգ քանակից 1000 կգ-ն: Այգու աշխատակիցները ակնադիտական զննման արդյունքում հանգել են այն եզրակացությանը, որ մսեղիքի խմբաքանակում առկա է ձիու և ավանակի միս, որից հետո իրականացվել է ենթադրյալ՝ ավանակի և ձիու մսեղիքի մարմնի տարբեր մասերից նմուշառում, այդ թվում ազդոսկրի մսազերծում՝ մսի տեսակի վերաբերյալ փորձագիտական եզրակացություն ստանալու նպատակով: Նշվածի վերաբերյալ 13/07/2023թ-ին կազմվել է արձանագրություն, որի համաձայն որոշում է կայացվել չնդունել վերոնշյալ քանակությամբ մատակարարված միսն՝ ամբողջությամբ: Միաժամանակ՝ 14/07/2023թ-ին կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռ. Ս. Մխիթարյանի կողմից տրվել է եզրակացություն առ այն, որ ներկայացված նմուշների մի մասը պատկանում է խոշոր եղջերավոր կենդանիների, իսկ մյուս մասը միասմբակավորների:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև՝ այն հանգամանքը, որ «Դաննիկ» ՍՊԸ-ն թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ Այգու կարիքների համար մսեղիքի, մասնավորապես՝ խոշոր եղջերավոր կենդանու մսի ձեռքբերումն ունի կենսական նշանակություն, իսկ մատակարարումների խախտումներով և ոչ պատշաճ (տեխնիկական բնութագրով սահմանված ապրանքից տարբերվող ապրանքի մատակարարումը) իրականացումը կարող է հանգեցնել կենդանատեսակների անկումների և ամբողջովին խաթարել Այգու գործունեության բնականոն ընթացքը, Այգու կենդանիների կերակրման առաջնահերթությամբ և հրատապությամբ պայմանավորված, «Դաննիկ» ՍՊԸ-ի հետ կնքված ապրանքի մատակարարման ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-23/1-2 ծածկագրով պայմանագիրը 1-ին չափաբաժնի մասով միակողմանի մասնակի լուծվել է:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները, ինչպես նաև այն հանգամանքը, որ Ձեր կողմից սահմանված կարգով համաձայնագիրը ստորագրելուց ներկայացվել են որակավորման և պայմանագրի կատարման ապահովումներ՝ «Ակբա Բանկ» ԲԲԸ-ի «Շենգավիթ» մասնաճյուղի կողմից թողարկված բանկային երաշխիքներ, առաջարկում ենք 5 աշխատանքային օրվա ընթացում՝ մինչև ս.թ. հուլիսի 25-ը ներառյալ, ապահովել 1-ին չափաբաժնի մասով չմատակարարված քանակությունների չափով, մասնավորապես՝ որակավորման ապահովման համար՝ 7,381,125.00 (յոթ միլիոն երեք հարյուր ութսունմեկ հազար մեկ հարյուր քսանհինգ) ՀՀ դրամի, իսկ պայմանագրի կատարման ապահովման համար՝ 4,920,750.00 (չորս միլիոն ինը հարյուր քսան հազար յոթ հարյուր հիսուն) ՀՀ դրամի գումարների վճարումը՝ «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի բանկային հաշվեհամարին փոխանցելու միջոցով:

Վերոնշյալի վերաբերյալ Այգին դիմել է Ձեզ սպասարկող բանկին՝ «Ակբա Բանկ» ԲԲԸ-ի «Շենգավիթ» մասնաճյուղին:

Միաժամանակ հայտնում ենք, որ վերոնշյալ վճարումների չկատարման դեպքում Այգին վերոգրյալի վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրելու է լիազորված մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները կիրառելու նպատակով:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

«ԵՐԵՎԱՆԻ ԿԵՆԴԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԱՅԳԻ»
ՀՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ Ժ/Պ **ԱՐՄԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**